

# SURE WORDS



1944

Օ Յ Դ Զ  
Ա Տ Ե Ր Ե

Համար Եռթ. տթ և ինմեր.  
Հոկ. օգոստոսից.

Գ Ո Ւ Թ Ո Ւ Թ  
Պատումայի պատճեն  
Հարսփեսական վթական  
Ա. Է Զ Մ Ի Շ Ե Ր Ե



1944

## ՅՈՎԱՆԴԱԿԱՒՐՑՈՒՆ

Ե

1. Խոյրենից ..... 3

### Պատմական

2. Այւազի Հայոց Խոյրապ. 3. Ֆեղակուի գրաքյունը հրան. Հեղառանակը Հայոց  
թեմի խորդովն ..... 8

### Հայոց եկեղեցի

4. Մայր Աթոս ..... 8

5. Տ Գորեգին արքեպիսկոպոսը Ամենայի Հայոց Խոյրապետության ժամին ..... 9

6. Տ Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյան ..... 11

7. Հայրապետական պատվիրակությունը Երևանապետություն ..... 14

Բանակի զենքեալ Բաղրամյանի անվան կառուցվելի անհային տարածան ուղաց

7. ՀԻՎՆ. ով բան. ՀԱՃԹԱՆ-Չոր. է. Բաղրամյան ..... 17

### Կրօն-օյաձտական

8. ԳԱՅՐԻՆ-Վարդապ-ով ոռնը ..... 16

9. ՀԱՎՍԵԺ ԳՐԻՎՈՐՑԱՆ-Հիշողությաններ Կոմիտոս վարդապետի ժամին ..... 23

10. ՌՈՒԲԵՆ Գարդապետ-Հեթանոս Հայուսանի աշխարհիկ երգերի ուղղաշափություն  
նր եկեղեց-կան երգերութ ..... 27

11. ՃԵՄԱՐԱՆԵցի-Աշխասանցը ու-ըստի-հանություն և երջանկության ողբյուր ..... 33

12. Ն. Տ.-Զկարքնոց ..... 38

13. Մամուլի սեռություն

ՀՐԱՄԱՆԱՀ  
ԱԶԴԵՑԻՐ ՏԵՂԱԿԱԾԻ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՎԵՑՈՒԹԵԱՆ  
Տ. ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՎԻ

## ՀԱՅՐԵՆԻՔ

ՀԱՅՐԵՆԻՔ: Ի՞նչ քաղցր է հաջում մեր սկանդին: Այս այն զաղափարն է, որ մեր սպառմատևակ տօհմերին միացըել է, ործնելով նրանց մի ժողովուրդ, մի աղմանդամ ընտանիք, որոնց երակներում իրենույն ագյունն է հոսում, որոնց բերում միենույն մայրենի բարրան է հընում, որոնց ոչ կարիքը և ոչ վտանգը արող են բաժանել:

ՀԱՅՐԵՆԻՔ: Լաւ մեղ հիշեցնում է, որ եր ազգի բախան ու պատմությունը ուրա ապիած է այս երկրի հետ, ուր ապրել և պրում է նա, ուր սոսպիած է մեր պարի արյունով սնցյալ պատերազմների, որաիրուսությունների և հալածանքների որհիվ, որ պահում է լին դրուզերի և արթամ քաղաքների հուշարձաններ, ուր ափիվել են վշտի ու տասապանքների աղի ցունքներ, ուր հնչել են երբեմն նաև ուժինանաց և հալթութեանց ուրախ երրոր: Նա մեր կյանքի օրրանն է, ուր օրորու է մեր օրորոցը, ուր հիմնվել է մեր փական օջախը, որ ամփոփել է յուր ծում մեր սիրելիներին և որը պիտի լինի և մեր վերջին հանդույան վայրը:

Մեր ազգի կյանքը երեկ չի սկսված, հետաքրանան պատմություն ունի ո անցյալում: Հարյուրամյակներ ի վեր յություն ունենք, և մեր ազգի բախուը դ երկար շրջանում միշտ փափոխական է էլ, երբեմն դեպի առաջ և երբեմն պի ետ, բայց միշտ ունեցել է միեն հակատագիրը, միենույն վիշտն ու ախությունը, որ բաժին է ընկել ամփության: Նրա հարյուրամյակների գոթյան պատմական գասը մեղ սովորեց: Է ո, որ մենք սկսել է միասին լինենք,

միասին խորհենք, միասին գործենք, միասին քննենք դժուհության լարմառիթները և միասին խորհենք համայնտկան երջանկության մասին.

Մեր ազգի գոյսության, նրա մեծության, նրա պատքի և նրա բարեկեցության համար շատ սերունդներ են մաքաւել և տանջել: Մենք ժառանգներ ենք այն բոլորի, որ մեր պատերի ջանասիրությունը, անձնվիրությունը, նրանց հերոսական ողին է ծեռք բերել: Այս հավատում եմ, որ ինչ որ մեր հայրերը մեզ ավանդ են թողել, այդ նույն հիմքի վրա մենք կշարունակենք շնչել կառուցումը: Այս բարորական պատմականությունը պիտի լինի մեր բոլորին համար իբրև սրբություն,

ՀԱՅՐԵՆԻՔ: Ի՞նչ խոր աղդեցություն ունես դու զգայուն սրտերի վրա: Այո, դու բնությամբ հարուստ ես, զգալիից և գեղեցիկ, և եթե օտար մի երկիր լիներ՝ անդամ ագնելի դրավիչ, հյուրընկալ, այն ժամանակ էլ քեզ փոխարինող չեր լինի մեղ համար, որովհետեւ հայրենի կարուաը ներքին զգացմունքով և անքամտելի կապերով կապում է մեր սրամերը քեզ հետ և սոյն պում մեղ ձգել ամեն ինչ օտարության մեջ և դառնալ հայրենի երկիր:

ՀԱՅՐԵՆԻՔ: Դու հասունացրել ես մի ժողովուրդ, Հայ ժողովուրդ, որը զատափակելով ցուցաբերել է առաքինություններ, որոնք վկայում են, թե նա մեծ ժողովուրդ է եղել, և այսօր ես ընդունակ է տալու հերոսական քաջության և անվեհերության փայլուն օրինակներ:

24 տարի առաջ, մինչև Սովետական կարգերի հաստատումը, չունեինք Հայրենիք, որպես իրական Փիզիկական ուրիշ և

կար միայն նրա գաղափարը, իբրև բարոյական ույժ, իսկ այօօր ունենք Հայրենիք փառք և պատիվ նրա առեղծողին։ Նաև փառք Հայ ժողովրդին, որ իր հոգեոր առաքման թյուններով, Փիղիկական աշխատանքով անձնազուռնթյամբ արժանացալ արդ փառքին։ Հայրենի երկրի և Սփյուռքի Հայ ժողովուրդ, եթե իբրև Հայ ժարդ և թրք Հայ ազգ ապրել կուզես, դի՞ր քո ձգտումներն ու Հույսերը մեր մեծ Հայրենիքի և Հայրապետական Աթոռի առաջ, Հավատալով, որ նրանք են սրտիդ սրբությունների և իղձերի պահապանն ու կատարողը։ Աւխոփ'ր նրանց Հավատարիմ աջակիցը լինել միշտ, ինչպես և այսօր, կանգնելով Հայ ազգի փառքի ու երջան-

կության և մեր գաղափարական եկեղեցու դրոշակի տակ։ Զյատել Հայրենիքի և Սկզբիածնի բարոյական ույժն ու հեղինակությունը, սառնություն չքարոզել նրանց դեմ և չժողորեցնել ժողովրդին։ այս է ամեն աղնիվ Հայրենասերի պարտքը։

Պատերազմական այս ահավոր օրերին վերառաքենք մեր աղօթքները Բարձրյալին Հայրենիքի և Սկզբիածնի զոյության հարատեսության համար, որպեսողի նրանց հովանու տակ հանգիստ առնեն նաև Սփյուռքի տառապյալ ու տարագիր Հայ ժողովուրդը և գիտությամբ ու Փրկչից ճառագլթած Երկնային լուսով առաջնել ևս զարդանաւ ու զարգացնել իր մշակույթը, ի փառ և ի պարձանս մեր Հայրենիքի։

**ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԸՆՏԻՐ ՏԵՂԱԿԱԼ**

**ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵԳԻՍԿՈՊՈՅԱՅ**

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ  
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՍԻ  
ԽՈՐՀՐԴԻՆ

Ի Պատասխան իրանա-Հնդկաստանի կրօնական Խորհրդի Հայտարարության Ամենայն Հայոց Հայրապետության ազգընտիր Տեղակալ Տ. Գևորգ արքեպիսկոպոսը նույն կրօնական Խորհրդին ուզարկել է Հետեւյալ պրաւթյունը.

Ի Հետեւյան Արդո կրօնական Խորհրդիդ տարվույս ժայիսի 30-ի գրաւթյան Հաստատում ենք Բարեկրոն Տ. Ներսես քահանա Դավթյանին իրանա-Հնդկաստանի թեմի կրօնական Խորհրդի անդամ, փոխարքն Բարեկ. Տ. Համբարձում ավ. քահ. Վարդանյանի, որ իրքն նոր նշանակված միճակա-վոր Կալկաթայի Հայոց, մեկնել է իր պաշտոնատեղին:

Օրէնում Ենք Կրօնական Խորհրդիդ նորընտիր անդամ Տ. Ներսես քահ. Դավթյանին՝ մաղթելով Բարձրյալին շնորհել նրան կառ և ուրժ՝ պատվով և բարեխղճությամբ վարելու. իր նոր պաշտոնը ի միջիթարություն ժողովուրդյան և Մէր:

Ազգընտիր Թեղակալ Ամենայն Հայոց Հայրապետուրյան  
ԳԵՎՈՐԳ Ա. ՐԱԶԵԳԻԵՎՈՎՈՅ

## ՄԱՅՐ ԱՌՈՌԻ

Երուսաղեմի պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսի մահվան առթիվ, որ տեղի ունեցավ սույն թվի Հուլիսի 31-ին, Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընակիր Տեղակալ Տ. Դեկորք արքեպիսկոպոսը ցագակցական հետագիր է ուղարկել Երուսաղեմի պատրիարքի Տեղապահ Տ. Իյուրեղ վարդապետին:

Երուսաղեմի Հայոց պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոսի մահվան առթիվ Հայրապետական գիվանը բոլոր թեմերին ուղարկել է Ամենայն Հայոց Հայրապետության Տ. Տեղակալի Հետերալ շրջարերականը.

«Եկորապես վշտացած ենք Երուսաղեմի սրբադան Պատրիարքի մահվամբ: Հանգուցյալի քառասումքի առթիվ առաջադրվում է կատարել Հանդիսավոր պատարագ և Հոգեհամբկան»:

Թեհրանի Հայ Համայնքը Հայրապետական պատվիրակության Թեհրան ժամանելու կաղակցությամբ սույն թվի Հուլիսի 2-ին իր գոհունակության հեռագիրն է ուղարկել Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընակիր Տ. գակալ Տ. Գիվորք արքեպիսկոպոսին:

**ԷՇՄԻԱՆԻ, ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՎԱՏՎՈՒԹՅԱՆ Տ. ԴԵՎՈՐԳ  
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵՐՈՒՔՑՑԱՆԻՆ**

Թեհրանի Հայ-լուսավորչական Համայնքը արտահայտում է Զեզ իր որդիական ակնածությունը պրոֆեսոր Արքահամանի պատվիրակության համար: Համայնքը իմնկրում է փութացնել թեմի առաջնորդի նշանակումը: Պատվիրակությունը մեկնեց Բաղտատ:

Եկեղեցական խորհուրդ

Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընակիր Տեղակալ Տ. Գիվորք արքեպիսկոպոս Իրանա-Հնդկաստանի Կրոնական Խորհրդին ուղարկել է Հետագիր, որով Հաստատում է Իրանա-Հնդկաստանի Կրոնական Խորհրդի նորընտիր կազմը:

Նոր Նախիջևանի առաջնորդական վախանորդի միջնորդության հետեւ վակալը Նոր Նախիջևանի Զալթը գյուղի համար քահանա է ձեռնադրվել ։ ԶՀանդյույանը :

Համաձայն Օդեսայի հայ Համայնքի գիմումի արտեղ քահանա նըստակվեց հեմարանական թգնատիոս քահանա Մազսիսյանը, որը մեկնել է իր պաշտոնավայրը և անցել իր պարտականությունների կատարմանը :

Սեպտեմբեր ամսի 20-ին լովեց Իրանա-Հնդկաստանի Կրոնական Խորհրդի սույն թվի Հունիսի զեկուցագիրը Գարբիել և Մերի Միքայելյան ամուսինների ապահարզանի գործի մասին։ Որոշվեց լուծել Գարբիել և Մերի Միքայելյան ամուսինների պսակը և վերամուսնության իրավունք տալ Մերի Միքայելյանին նրանց դուստրը Հանձնելով իր մոր ինամային։

Սեպտեմբերի 20-ին լովեց Իրանա-Հնդկաստանի Կրոնական Խորհրդի Հունիսի 22-ի թ. 4962 զեկուցագիրը Արմենակ և Հայկանուշ Հովհաննեայան ամուսինների ապահարզանի գործի մասին։ Որոշվեց լուծել Արմենակ և Հայկանուշ Հովհաննիսյան ամուսինների պսակը վերամուսնության իրավունք տալով տիկին Հայկանուշին, երբ նա բժշկական վկայական ներկայացնի Կրոնական Խորհրդին իր հիվանդությունից բժշկված լինելու մասին, և սույն որոշումը հայտնել կողմերին։

Սեպտեմբերի 26-ին Ամենասպատիլ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Զեսրեք շրանը Ս. Էջմիածնի Մայր Տաճարում սպակավարության աստիճան տիեզ կահան Տեր Աստվածատրյանին և Սահակ Խաչատրյանին։ Հաջորդ օրը, սեպտեմբր 26-ին վերոհիշյալներին ձեռնադրեց քահանա։

Սեպտեմբեր 29-ին Էջմիածնի Մայր Տաճարում Ս. Գևորգ գորավարի տոնին՝ տեղի ունեցավ Հանդիսավոր պատարագ, Պատարագին ներկա էր Ամենայն Հայոց կաթողիկոսի Ազգընաթիր Տեղակալ Ամենասպատիլ Տ. Գևորգ արքեպիսկոպոս Զեսրեքը։ Պատարագում էր Վահան ծ. վարդապետ Կոստանդնուպոլիսի վահանա։

Ս. Պատարագից հետո խուռն բակմության ներկայությամբ Հողեւանդիս կատարվեց Գեվորգյան Հոգենոր ձեմարանի հիմնադիր Գեվորգ Գ. Կաթողիկոսի գերեզմանի վրա։



Հայկական ՍՍԸ Կառավարությունը Թուլլատրել է Հոգեոր ձեմարանի  
բացումը, ձեմարանի բացման համար կատարվում են նախապատրաստական  
աշխատանքներ:

Այսագրի հաջորդ համարում կղետեղենք Հոգեոր ձեմարանի ընդունե-  
լության ժանրայան պայմանները:

---

## S. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ (ԸՆՏՐԵՎԸ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ) ԱՄԵՆԱԳՆ ՀԱՅՈՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՍԻ

Կիլիկիու տան նորընտիր կաթողիկոս ԳԵ-  
ՐԱՎԱԿԱՒՎ Գարեգին արքեպիսկոպոսը Հյու-  
սիսային Ամերիկայից նոր պաշտոնավայրը  
մեկնելուց առաջ ՀՀայաստանեայց եկեղե-  
ցից պաշտոնաթերթի էջերում շոշափում է  
մի շարք կարեւը հարցեր։ Տ. Գարեգին  
Սրբազնը պաշտոնաթերթի Ն. Զ-ի  
և Հայ եկեղեցական և պօքային կեանք՝  
բաժնում իր նշանավոր ելույթի մեջ ուժդին  
հակառարկած է Հայոցնում Ամերիկայի հայ  
համայնքը Ս. Էջմիածնից անջատելու, մե-  
կուսացնելու միսասակար ու Հակաթոռ տրա-  
մադրության, որ արտահայտել է Փափազ-  
յան ստորագրությամբ մի Հողմածազիր  
ունդական թերթերից մեկում։

Տ. Գարեգին սրբաւանը խորամես գիտակ-  
ցելով Ս. Էջմիածնու պատմական նշանակու-  
թյունը և յատագով հանդիսանալով Ս. Էջմի-  
ածնի անսասանությանը և նրա անխախտե-  
լի հեղինակությունը հայուարարում է։

ՀՅԱՅՐՈՒՄ ենք մեր Հայուացնեալ ժո-  
ղովրդին, որ բարդելով իսկ Պ. Փափազյա-  
սի անձնաւորութիւնը և բարի նպատակը Հա-  
յաստանեայց եկեղեցին դօրացնելու ժաման-  
կութեամբ, նորա վերջին առաջարկութեան,  
այսինքն Ամերիկայի թեմը հանել էջմիած-  
նի վերահսկողութիւնից և ենթարկել Կի-  
լիկիոյ կաթողիկոսութեան («Պայքար»  
Յունի, 21, 1944) ոչ միայն համամիտ  
չեմք, այլ եւ համարում եմք ոչ օգտակար։

Հայոց Հայրապետութիւնը եւ եկեղեցին  
մի է, և էջմիածնի Հայրապետը նորա հո-  
գեոր գլուխին է և Կիլիկիոյ կաթողիկոսի  
աւագ եղբայրը իւր պաշտօնով և դիրքով։  
Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, ինչպէս և  
նրուսաղէմի և կ. Պալայ Պատրիարքու-  
թիւնները, իւրաքանչիւրը իւր Հայրաւորու-  
թիւնների և պայմանների սահմանների մէջ,  
պահելով հանգիրը իւր ներքին վարչական  
մեակերպութիւնները, պէտք է սժանդակ

հանդիսանայ եկեղեցաւ ամբողջութեան և  
բարոյական ներգործութեան զօրացման։  
Մասնաւորելով խօսքը մեր մասին, պիտի  
յայտնենք, որ երբեւ ընարեալ կաթողիկոս  
նաևն Կիլիկիոյ ոչ միայն էջմիածնի դէմ նի-  
ւէի չափ հակառակ քայլ չենք տնիլ, այլ և  
մեր բոլոր ենարաւորութիւններով պիտի  
աշխատենք պահպանել մեր բարի եւ եղ-  
րայրական յարաքերաւթիւնները, օժանդակ  
համդիսանալով նիւքապէս եւ բարոյապէս  
էջմիածնի եւ Ամենայն Հայոց Հայրապահ-  
ուութեամ Արուիմ»։

Այսուհետեւ գերազնոր Սրբազնը Հորդո-  
րում է Հայ Համայնքին նրութեական և բա-  
րոյական ամեն աջակցություն ցույց տալ  
Ս. Էջմիածնին, նրա օրգան վեջմիածնն  
ամսագրին և ճեմարանին։

S. Գարեգին Սրբազնը գրում է.

«Ատացել ւնք էջմիածնին պարբերականի  
առաջին Համարը, ամէն կերպով պիտի աշ-  
խատենք մասնակից լինել նորա յառաջադրէ՛  
մութեան և երբ ճեմարանի բացման բարի  
լուրն էլ ստանանք, դարձեալ Հետամուտ  
պիտի լինենք նիւքապէս և բարոյապէս  
օգտակար լինելու։ Երբ, Աստուծով պատմ-  
բազմը վերջանայ, մեր սրտի փափաքն է,  
անձամբ ներկայ լինել էջմիածնում եւ մեր  
մասնակցութիւնը բերել Ամենայն Հայոց  
կաթողիկոսի ընարաւութեան բաջուղութեան  
մէջ, աւելի շեշտելով Հայ եկեղեցու և  
Հայրապետութեան միութիւնը։»

Նույն պաշտօնաթերթի մէջ Տ. Գարեգին  
արքեպիսկոպոսը տողորդված Հայ ժողովրդի  
միամնության զաղափարով և լուրջ մտա-  
հոգված Հայ ժողովրդի ազդապահանու-  
թյան խնդրով ասում է.

«Մեր ազգը, գոհանալ կարող ենք, որ  
մեռած չէ. ճղակուտոր եղած բազգի Հար-  
սծների տակ, բայց ոչ արմատախիլ եղած  
Մեր Հայրենիքի մի կարևոր մասը, Խորհր-

գալին Հարաստանի սահմանների մեջ, Աստածած շնորհել է մեզ, թէև ժողովրդի ՎՅ մասն ապրում է Հայրենիքից զուրս։ Դրա կէսը ցրուած է Պարսկաստանից, իրանից սկած մինչեւ Ամերիկայի արեւմտեան սահմանները։ Խնչաքէս պէտք է պահպաններ Սփիւրքի, գրեթէ, միլիոնի չափ Հայութիւնը, մի խնդիր է աղքային տեսակէտով, որ զբաղեցնում է մեր մտքերը եւ մտառողութիւն պատճառում ամէնքիս։ Եկեղեցին, Բարեգործականը, մամուլը, կուսակցական կազմակերպութիւններն ու Հայրենականները իւրաքանչիւրը իւր լրջանի մէջ և իւր տեսակէտով մասն զգուած է արդ խնդրով, Ազգապահեղանութեան Ռուբական իմադրով։

Այսուհետեւ Սրբազնի արքեպիսկոպոսը հայ ժողովրդի միասնության, հայ ժողովրդի կենանության, մեր ժողովրդի հարատէ զոյսթյան աղբյուրը և միակ երաշիփը Սովետական Հայաստանի մեջ տնօնելով՝ արգարացի և ճշմարտապես շխտում է Սովետական Հայաստանի տնօնեական և կուլտուրական վիճակը, նրա ծաղկումը։ Դերաշնորհ Սրբազնը գրում է.

Ամենից առաջ մեր աշխերն ուղղած են դէսի Ա. Հայաստանը, որ օրէցօր զարգանում է նիւթապէս և կուլտուրապէս, ծաղկում շինարարութիւնը նիւթական և տնօնեական, դրական դեղարուեստական մարդերի մեջ, և այժմ էլ լարած իւր բոլոր ուժերը Խորհրդացին ուրիշ աղքերի հետ մաքառում է իւր զոյսթեան պահպանութեան, աղառութեան, ապահովութեան համար։ Այս է մեր կենանության աղքիւրը Եւյականնութեամ երաշխիքը։ Բայց մենք էլ մեր անձիքն ունինք, մեր գոյուար պարտականութիւնը, այս ցրուած Հայութեան, զանազան պետութիւնների և աղդութիւնների մեջ, ենթակայ նրանց լեզուի, օրէնքի և ըսղաքակրթութեան զօրեղ աղդեցութեան, միութեան, ամբողջութեան զագուֆար պահել։ Նախ և առաջ մենք պարտաւոր ենք Հայութիւնը և զարդարական այս պեղեցիկ բանասեղծութեամբ («Հայութանեաց եկեղեցի», Ն. 9. 1944 թ. օյ. Առաջնորդին վերջին խօսքը)։

պարտականութիւն ունինք հաւատարիմ մարզու այն զարաւոր ժառանդութեան, որ սուացել ենք մեր Հայրերից, որ մեր լեզուն է, մեր դրականութիւնը, մեր մշակոյթն ու պատմութեան գիտակցութիւնը, մեր աղջային եկեղեցին, մի խօսքով մեր Հոգմուր Հայրենիքը։ Ամէն ժողովրդի համար պէտք է Հայրենի երկիր, Հող, ջուր, ուր նա ապրել կարողանայ, բայց այդ բայրը, զորա հետ և պետական կեանք, եկեղեցի, միջոցներ են հոգեւոր Հայրենիքի ստեղծադրութեան համար։ Հողն ու ջուրը սիմուլ են, նշանակ այդ հոգեւոր Հայրենիքի համար։ Դորանոտվ է, որ մի աղդ հզօր է դառնում, և արդ հոգեւոր Հայրենիքի պահպանութեամբ է, որ պէտք է յարատելի և մեր գոյութիւնը, ուրիշ խօսքով անժահութիւնը որպէս մաս հայ ամբողջութեան։

Հայ ժողովուքազը Հայրենի Հողի և ջրի մասին մի գնեղեցիկ աւանդութիւն ունի Հիւսած։ Արշակ Բ. Երկար պատերազմներից յետոյ բաղթուած Պարսից Շապուհ Բազարութիւն և զերի ընկած, կանգնեցնուած են յաղթողի զահի առաջ։ Արշակ խօսում է հեղութեամ և խօնարհութեան լեզուով, և յախնում, որ կը կատարէ յաղթողի կամքը, կը լինի Հնապատ ըստ ամենայնի նորահրամաններին, եթէ աղաս արձակէ իրեն։

Եմայց իորհրդականներին լսելով, Հայաստանից բերել է տալիս եքիու բնու հող և երկու ոտփոր ջուր։ Հողը փուռմ զայսիքի առաջ և ջուրն էլ սրակում վերան։ Եւ երբ Հարցագննութեան էր բերուած զերի թագուորը, խօսում էր դարձեալ հեզ և պատրաստականութիւն յախնում են։ Թարկվելու նորա բոլոր հրամաններին բայց Հնաց որ աննկատելի անցնում էր հայ Հողի վերայ, պետական էր իորիսաւ, Շապուհին Համարելում իւր աղքական Արշակունիների զահի յափշտակիչ, և պատուերում էր իջնել զահից, որ վայել էր իրեն նառել։ Անա Հայրենի Հողի և ջրի սիմվոլիկ նշանակութիւնը ժաղովրդական այս պեղեցիկ բանասեղծութեամբ («Հայութանեաց եկեղեցի», Ն. 9. 1944 թ. օյ. Առաջնորդին վերջին խօսքը)։

## S. ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆՇԱՆՑԱՆ

Տարվաւոյ Հուլիսի 26-ին վախճանվեցավ Երուսաղեմի հայոց պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանցանը:

Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանցանը ծնվել է 1871 թվին, Սամաթիայում (Կ. Պոլիս): Վարդապետ է ձեռնադրյալ 1898 թվին, ձեռնադրյալ է եպիսկոպոս 1924 թ.: Հանգուցյալ պատրիարքը 55 տարիների իր անդուլ աշխատանքի մեջ ցույց ուված կատարյալ անձնվիրություն և հավատարմություն հայոց եկեղեցուն և նրա կենտրոն Մար Աթոռ Ա. Ֆամիանին, օգտակար ժամանակություն Երուսաղեմի Ա. Հակոբան վրա կանքին, որտեղ անց է կացրել իր Հովմական կյանքի մեջ ժամը:

Հանգուցյալ Մրրազան Պատրիարքի ժամանակ բարձր ծանր տպավորություն թողեց Ա. կիմիանի ողջ միաբանության վրա: Մրրազան Պատրիարքի թաղման օրը պատրագից հետո Հոգեհանդիսության կատարվեց Մայր Տաճարում Միաբանության և հավատացրածների խուռն բարձության ներկարությամբ: Ամենայն Հայոց Հայրապետության Տ. Տեղակալի կողմից անմիջապես կարգադրություն եղավ բոլոր եկեղեցիներում հոգեհանդիսության կատարելու Հոգելույս Պատրիարքի ժամանակ ամթիվ:

Մրրազան Պատրիարքի թաղումը տեղի ունեցավ Երուսաղեմում Հուլիսի 30-ին: Հանգուցյալ Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանցանի թաղման նկարագիրը, տալիս է «Զարթօննք» թերթի Ալուդի օրերը վերնազրավ Հոգիչ Հոգվածի մեջ:

«...Ա. Յակոբայ Մայր Տաճարի մեծ դանդը ընդհատ ընդհատ զուժեց ժահը Մրր. Պատրիարքին, ցաւի սարսուռ անցաւ

բոլոր Հոգեներէն, ոչ ոք կասկածեցաւ անոնցի իրականութենէն:

Երևարտարապետը և վարդապետներ Հակոբակ իրենց սրտամմմիկ վիճակին կը ձեռնարկեն անմիջական կազմակերութեանց: Հետադիրներ կը զմկուին Մայր Աթոռ, Անթիրաս և Սփիւռքի թնմերուն: Մասնաւոր Հեռազրերով թաղման ներկայ դանդը և լու կհրատիրուին եփվեկիոյ աթոռին Տեղակալ Խաղ Մրրազանը, Պաղտատէն Թուրքին արքապահուապոսը և Եղիպատուէն Մամրէ Մրրազանը: Մասնաւոր Հաղորդագրութեամբ լուրը կը Հաղորդուէր նաև Պաղեստինի ուստիօկայանին, որ նոյն իրիկունն իսկ կը ցրուէր բօթը ամթողի աշխարհին:

Ալա ներարկուաելէ և պատանդունիէ վերջ, Մրրազանի ժամանինը կը գետեղուէր Պատրիարքարանի մեծ դաւլիքի մէջ, ուսույցի կազմակարներու միջն և եկեղեցորական Հովահարներու տակ: Յաջորդ երեք օրերը անդան սուտի ծանր ճնշումն ներքեւ, Մահացող տպագրութցաւ և զրկունքաւ Պաղեստինի րորոր պետական պաշտօնատարներու, Հիւպատուններու, եկեղեցւոյ պետներու և զանգան հաստատութեանց և անձնաւորութեանց: Յաւակցական Հետադիրներ սկսան տեղալ ամէն կողմէն:

«Արքաթ օրը Ա. Աթոռ ժամանեցին Հրամիրուած եպիսկոպոսներէն Արտաւազզ Մրրազանը և Ռուրէն Մրրազանը Պաղտատէն, իսկ շաբաթ օր եկան Հասան կիլիկիոյ աթողիկոսական Տեղակալ Խաղ Մրքեպիսկոպոսը և Գաւիթիքէն՝ Մամրէ Մրրազանը: Եղիպատուէն իրըն ներկայացաւցից Եկած էր նաև Պ. Ճանիկ Պաղը, քաղաքական յաղույց աստիճանիութը, ինչպէս նաև Հանդուցեալ Պատրիարքից սրբական



ՄԵՐՐՈՅԻ ԱՐԴՅՈՒՆՎԱՐՈՒ ՀԵՂԱՆՑԱՆ

ԹԸ 8. Հայկազուն քհն. Ուկերիչքան և մեծանաւն բառաստեղն Պ. Վ. Թէքէնան, որոնց օդափոխութեամբ Պաղեստին գալը կը զուգադիպէր այս տիտուր առիթին:

Անարաթ երեկոյեան ժամը 5-ին, ամքողջ միաբանութիւնը թափորով Պատրիարքարան ելաւ, ուր կատարուեցաւ քահանայաթաղի «Տան կարգը»: Ընկուզենի փասաւոր գաղաղի մը մէջ կը Հանգչէր Սրբազնի մարմինը, զգեստաւորուած հայրապետական Հանդերձանքով: Լուցեալ մոմերով, աղօթքով, խնկով եւ շարականի երգեցողութեամբ Սրբազն Պատրիարքին զաղաղը՝կը առ վեց լիւզարմաս որներէ՝փոխադրուեցաւ նկեղեցի, պատկառելի Հանդիսաւորութեամբ ժողովրդային Համախումբ բաղմութեան մը մէջէն: Դադաղին Արեւումը յուղ ամէնքը առ Համարակի: Արցունք եւ ցաւազին Հեծիւններ բոլոր լրիներէ: Եկեղեցին արդէն զդեցած էր սուզի օրերու թր Հանդերձանքը, կրկնակ աթոռները Տեառնեղբար և Պատրիարքի առ զի չողով չզարշ-

ած էին: Առեանին մէջ ամդը դրուած էր բարձր, սեւածածկ պատուանիան մը, որուն չորս բոլորը բարձրադիր աշտանակներ սեւ երիշներով ժապաւինեալ: Դագազը կետեղուեցաւ պատուանդանին վրայ: Ժողովաւրդը, արցունքը աշքերուն, մոտեցաւ իր վերջին Համբոյրը դրոշմելու սիրեցեալ չովուապետի սառած աջին:

«Կիրակի առաւստ կանուխ չորս վարդապետներ, զադաղին չուրջ լոելեայն քաղեցին չորս Աւետարանները: Ժամերգութիւնը կատարուեցաւ մեղմածայն եւ վշտաղին: Հանգստեան Համգիստուոր Ա. Պատարազը մատոյց Գեր. Տ. Ռուբէն Արք. Մանամեան: Ա. Պատարազի ընթացքին, մնջոյն-էն առաջ, զաղաղը բեմ Հանուեցաւ, ուր Ռուբէն Արք. կատարեց վերջին օձման կարգը լնդՀանուոր յուզումի մէջ...»:

Հանձին Տ. Աւորուազ արքեպիսկոպու Նշանքանի Հայ եկեղեցին կորցրեց իր անձնին ու ականավոր մշակին:

## ՀԵՅՐՈՊԵՏԱԿԱՆ ՊԵՏՎԻԹԾԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱԼԵՄՈՒՄ

Ամենային Հայոց Հայրապետության Աղջ-  
լնատիր Տեղակալի պատվիրակությունը  
սույն տարիքա Հունիսի 3-ին ժամանել է  
Երուսաղեմ։

Երուսաղեմի հայ պատրիարքական պաշ-  
տոնական ամսագիր «Միանը» նկարագրուած  
է Հայրապետական պատվիրակությանը  
ցույց տրված խանդագառ ընդուներությու-  
նը Շիշմիածնի պատվիրակը Երանսպետ  
Ս. Արքուոյ մէջ փորագրով հոդվածում։

«Յունիսի 3-ին, դրում է Վիրոնիք, ու-  
րախութիւն ունեցանք մեր մէջ ողջունելու  
Մայր Աթոռոյ և Ամենայն Հայոց Աղջու-  
տիր Տեղակալի Պատուիրակ Բրուֆ. Աշոտ  
Աբրահամեանը եւ իւր քարտուղարն ու  
ընթացակից Պր. Անուշաւան Տէրդրիքորեա-  
նը, Յամբորդ օրը առառան ժամը 10.30-ին  
պատշաճ ընդունելութեամբ թանկագին հի-  
սերը առաջնորդուեցան Ս. Պատրիարք Հօր  
և Նորին Ամենապատութեան հաղորդ-  
ցին Աղջունտիր Տեղակալի Եղայրական  
Համբորդին ու յարգանքը։

«Յեաոյ Պատրիարքարանի Մեծ Դահլիճին  
մէջ Պատրիարք Ս. Հօր նախադահութեամբ  
և Միաբանութեան ներկայութեամբ ընդուն-  
եցան Մայր Աթոռոյ Պատուիրակը. երգ-  
չակում երգեց Շիշմիածնի շարականոր,  
կարդացուեցան նուիրակներու ընդունելու-  
թեան յատուկ ազօթքը, ապա Ամենայն Հայ-  
ուց Աղդընտիր Տեղակալին Կոնդակը ուղ-  
ղուած Ս. Աթոռույո Միքաղան Պետին։  
Լուսարարակետ Տ. Կիւրեղ Ծ. Վրու. իս-  
րայելեանը ըրաւ բարիգալուստի ուղերձը,  
խակ Մրրազան Պատրիարք Հայրը աւելցուց  
իր սրասարյա մաղթանքը Մայր Աթոռոյ  
պայծառութեան և անոր ներկայացուցիչնե-  
րու յաջողութեանը համար։

«Ապա ընդհանուր լուութեան և քաղցր  
սպասումին մէջքն, խօսք առաւ Մայր Ա-  
թոռոյ Պատուիրակ Բրուֆ. Աշոտ Աբրա-  
համեանը, խօսեցաւ Ս. կիշմիածնէն, իր ար-  
տասահմանի զաւակներուն նկատմամբ ու-  
նեցած սէրէն և Հայ Եկեղեցւոյ անցեալ  
փառքերէն եւ ներկայի ամէնուն ուշագրու-  
թեան առարկայ նղած և բռվանդակ ազգի  
համակրանքին մէջ անդամ մը Եւս բարձ-  
րացած նուիրականութիւններէն, Մէր Եկե-  
ղեցին, ըստ, արժէք մըն է, և այս վերջին  
պատերազմը փորձաքարը նղաւ որ ան-  
դամ մը եւս Հնչեցնէն իր անկեղծ Հայրե-  
նուիրութեան ձայնը, ինչպէս ցոյց տուած  
էր նոյն արդ Հայրենասիրութիւնը տարի-  
ներէ ի վեր իր բեղմնաւոր յառաջեամբ...»

«Խօսեցաւ մէր Եկեղեցւոյ ժողովրդասկի-  
րութեանը ժամին։ Աղջը, ըստ, միշտ  
պէտք ունի իր Եկեղեցիին սրտէն հոսած  
հոգեւոր ու մայրական սիրփանքին. եւ  
Ամենայն Հայոց Աղդընտիր Տեղակալը ի  
տես մեր Եկեղեցիի կարիքներուն հարկէն,  
ի հնարս է դրզուած, եւ ասոր չտա մը  
ապացոյցներէն մին է մէր ներկայութիւնը  
հոս ձեր մէջ։ Ոչ մեկ Եկեղեցի, ըստ,  
այնքան սերու կապերով եղած է իր  
ժողովրդին Հետ՝ որքան Հայ Եկեղեցին։  
անիկա ոչ միայն իրըն սղաղղած մայր մը  
լաբուր ի ձեռին որոնած ու յանձնանած  
է իր զաւակները, այլ նաեւ բաժնանած է  
անոնց ցար եւ ուրախութիւնը հսւասարա-  
պէս։

«Այժմ Հայրենիքի մէջ, եթէ մեր Եկե-  
ղեցին այլես չզբաղիր քարգաքական և  
կրթական գործերով, ատիկա պէտք չէ  
նկատուի իբրեւ փաստ անոր լքումին. վասն  
չի մեր գերութեան շրջաններուն Եկեղեցին

սկամայ և զբաղված քաղաքական հարցելով, եւ այսօր ինք պէտք է բախտաւոր ողաւ ինը մինչեւը, որ կը ճայ թուիլ զուտ ոգևոր գործին, իր իրական դերին.

«Պատերազմի առաջին օրերէն Պետութիւնը նկատելու որ Սկեղեցին իր ժողովրդին հետ է, տոր փառաց տուաւ Ամենայն Հայոց Ազգակիր Տեղակալը իր կոնսամբներով հրաժելու ինչպէս Մայր Հայրենիքի, այնպէս ու արտասահմանի ժողովուրդը, որ մեկ արդու պէս, ինչպէս միշտ, ոյս անգամ ապաշտպանէ ոյն արժէքները, սրոնք ըն են և մեր ժողովուրդը, յարեց պատմական Բրուֆէսորը, գիտ ոչ միայն արժէքներ ասեղծել, այլ նաև պաշտպանել անոնք։

«Յետոյ խօսելով իր առաքելութեանը մասն, ըստ թէ ինքը արտասահման կուղայ զգընտիր Տեղակալի և Գերազոյն Հոգեւոր որհուրդի կողմէ, իր առաքելութիւնը զուտ զեւոր է, այցելելու արտասահմանեան թերուն, գալ Երուսաղէմն ու Անթիւթառը, ելի անդա ընելու համար Մայր Աթոռի արտասահմանի թեմերու յաբարելունը, եւ յառաջիկայ աշան ըլլալիք կառողիկութան ընտրութեան համար գետին սորատանել։»

«Խօսենաւ. Երուսաղէմի վանքին անցեա, ներկայ զերի ժամանին եւ իր զոհումակունը յաբանեց այս բոլորին հետ միասին, ուսաղէմի Մայր Աթոռոյ նկատմամբ ոց տուած որդիկան զերութիւնը մասնակութիւնը առաջաներ պիտի հանդիսանան Մայր Աթոռունը։»

«Յուլիս 9-ին Հրաւէրով նորին Ամենատուութիւնն Արքազան, Պատրիարք Հօրիածնի նուիրակը խօսեցաւ Երուսաղէմի և համախումբ հասարակութեան, ժառ. ժառարանի բակին մէջ։ Խօսեցաւ մեր որենիքնն, անոր անցեալ ու մանաւանդ կայ արժէքներէն, Կարմիր Բանակի ըն ժարանչող մեր պիտի հանդիսանան Մայր Աթոռունը։»

բավին, կիմիածնէն և մեր արի ու շինարար ժողովուրդին, յուսադրելով եւ խանդականելով բոլորը, Հայրենիքի մտածումով, կիմիածնի սիրով ու կարօսով։

«Ճարաբ Յուլիս 18 Աղդընտիր Տեղակարի նուիրակը բնկերակցութեամբ իր ջարաւագարին և առաջնորդութեամբ Եղիշ Վրդ. Տէրակըւանի, այցելեց մեր թեմերէն Յուպէի Հայութեան, անդւոյն ժողովուրդի կանխուած հրաւէրով։ Ժամը 5-30-ին վանդի դուռնէն Պատուիրակը դիմաւորուեցաւ Հով. Տ. Արթուր, Բարդէն եւ կոմիտաս Վարդապէտներէն, Հայաստանի Օդնութեամն Յանձնախումբի անդամներէն և յառաջաւոր աղդայիններէն, Հ. Ե. Ա. ի սկաուն նըրու խումբը իրենց առույզ եւ կիրթ զիմաւորումով կառեցնէին իսանդավագուստինը և ուրախութիւնը որ իր զգացուկը բոլորին դէմքերուն՝ ինչպէս Հոդիին մէջ։

«Կէսօրին, Պատուիրակին ի պատի Հայաստանի Օդնութեամն Յանձնախումբը, վանքի Տեղարանին մէջ սարքած իր շենդ սեղան մը, եղան ճառեր և բարեմաղթութիւներ, ինչ երեկոյնան ժամը 5-ին Ս. Գյուղադրի վարժարանին սրահին մէջ խօսեցաւ Յուպէի Հայ համախումբը հասարակութեան իր առաքելութեանէն, կիմիածնէն, մեր Հայրենիքի վերեւուրէն, և այն բոլոր աղդէքներէն որոնք մերն են այսօր, ստեղծուած Հայ ժողովուրդի քրահներով և արինու։»

«Յարգելի Պատուիրակը շրմեցաւ նաև քաղաքին գլխաւոր ու հանրային հաստատութիւնները, Երեքշարթի օր վերադաւ Երուսաղէմ իր հետը բերելով Յուպէի կազութիւնն սկզն ու համակրանքը։ Յուպէի Հայութիւնը իր զոհումակութեան և սիրոյ իրեւ արտայայտութիւն, հեռակիր մը դրէց էջմիածնին, Աղդընտիր Տեղակալին, իրենց նկատմամբ ցոյց տուած Հայրական այս գլուրդուրանքին համար։»

«Տակաւին քանի մը շաբաթներ պիտի ժայիւնք Հայրենիքն եկած այս կենդանի խարրիկներու ներկայութիւնը, Յառաջիկայ կիրակի պիտի այցելեն Հայքայի հասարակութեանն...»

«Մայր Աթոռոյ նուիրակները Սփիռքի սահմաններէն իրենց յուշիկ, բայց խաղաղ և դգօն քայլերով, զրաւած էն արդէն Հայ ժողովուրդի ոչ միայն ուշազրութիւնը, այլ նաև Համակրանքը։ Մայր Աթոռոյ սրբութիւններէն, Հայրենիքի կենսափայտութիւններէն, և մեր անցեալ և ներկայ սրբութագործութիւններէն բոյրեր, ձայներ և գոյներ կը թրթուան իրենց խօսքերուն մէջ։

«Եղմիածնէն և Հայաստանէն կուզան անոնց և այս պարագան միայն կը բառէ, որ բոլորը նման ՂԱՄԻՊ-ին, իրենց հետքին մէջ սեղմած կարօտին անձուկը, իրենց հողին աշքերովն ու նայուած քներովը, թրւին հարցնելու իրեն... «Ռւասի՛ կու գաս, ծառայ ենք ձայնիդ... մեր աշխարհէն խարիկ մը չումիա»։ Ու Պատուիրակ Բրո-

ֆյառը, լուրջ, զգայուն եւ գիտում, զիաձ տալ ամենուն ոչ միայն պատշաճ ու քաղցրադին պատասխան, այլ նաև ճշմարտութեան և արդարութեան պատասխանը։

«Եւ սակայն որպէսպի իջմիածնի Ազգըն-տիր Տեղակալի Հրամայած առաջելութեան այս գործը արդիւնաւորուի իրապէս, Ազգին և Եկեղեցին բարոյն և օգտին հայար, պէտք է որ Սփիռքի Հայութինը իր բոլոր ժառերով աջակցի իջմիածնի ներկայացուցիչներուն, բերեյու Համար իր յարդան այն գաղափարին, որը Պատուիրակը կանձնաւորէ։ Սպասել իրեն սրբութին, լսել զինը հաւատքով ու տնվերազահօրէն աշակցի անոր։ Այս պէտք է ըլլայ բոլորին փափաքն ու կամքը, ինչպէս նաև ի սրտէ մաղթանքը անոնց յաջողութեան։



## ԹԱՆԱԿԻ ԴԵՆԵՐԸ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՄՆՎԾՆ ԿԱՌԱԽՈՎԵԼԻՔ ՏՈՆԿԱՆԻ ԵՇԻՄԱՑՆ ՑՈՒՄԱՅ

Բանակի գեներալ Բաղրամյանի կտուրած սիրագործությանները և պահաժամի Կարմիր Բանակի տարած հաղթանակները նրա գեկավարությամբ, Հայրենասիրական բարձր էնառությամբ ևն առաջ բերել արտասահմանի հայութբան մեջ: Թեհրանի հայ համայնքը ջերմ Հայրենասիրական զգացմանընթարով համակած ձեռնարկել է մեծ հանդասակության բանակի գեներալ Բաղրամյանի անվան տանկացին շաբախյան կառուցման համար: Այդ նպատակով Թեհրանում կազմակերպել է կենարուական Հանձնաժողով, որը անցել է եռուն աշխատանքի: Ստորև վետեղում ներ Հանձնաժողովի աշխատանքին նվիրված ճշոր: Հ. Բաղրամյան վերապեր կրող սույն հոգածը, որ ստացվել է Թեհրանի Բարձրակրպակ: Տ. Հովհ. ալ. Տաճ. Հաֆյամի ստորագրությամբ:

ՀՀայրենական քաջարի բանակայինների և դրագարմների առանձնապես Ճոր: Բաղրամյանի ներկա Հայրենական պատերազմում ցուցաբերած հերոսությունները չափազանց ողերեցին: Սկյուռքի Հայրենական Հայ ժողովրդին:

ԱԱյդ ոգեշունչ Հայրենասիրական արաւագը ությամբ առանձնապես Թեհրանի մի շարք երիտասարդ ազգայինների մեջ միտք հղաւավ: Հայ բանակայինների մարտնչումը արեցավորելու համար, նրանց հաղթությունը գիտավորող զորավարներից մեկի Հ. Բաղրամյանի անվան տանկացին զորացյուն առաջնական առաջնական գորացյուն առաջնական առաջնական գորացյունը: Այդ նպատակով նաև կազմակերպումը Թեհրանի հայ համայնքի մեջ առեղծեց արտօնությունը: Այս գործի շուրջը սիրով համարվեց Թեհրանի ամբողջ համայնքը: Առաջնորդությունը նպաստելու համար կազմակերպությունը ու թերթերը սկսեցին ներգաղնակ աշխատել:

Ենթակորությունը խիստ մեծ էր: Բնագառաջ գնարավ համայնքի այդ բարձր Հայրենասիրական ուգեշնչան, կենարուական Հանձնաժողովը բարերար Ռուսան Սայանի նախագահությամբ Փոնդի կազմակերպման նպատակով իմենույթ Հրավիրեց: Անձույթին մասնակցում էր մոտ 100 հոգի, Զորավար Հ. Բաղրամյանի անվան Փոնդի կազմակերպումը Թեհրանի հայ համայնքի մեջ առեղծեց արտօնությունը: Այս գործի շուրջը սիրով համարվեց Թեհրանի ամբողջ համայնքը: Առաջնորդությունը նպաստելու համար կազմակերպությունը ու թերթերը սկսեցին ներգաղնակ աշխատել:

Ենձնարուական Հանձնաժողովը, որի ղեկավարը Ռուսան Սայանն է Հանդիսանում, կազմակերպեց Հանձնակիչ խմբեր, որոնց արվեց հատուկ կանոնավոր մատյաններ և բնկայագրեր:

Այս ազգային գործին Զոր. Բաղրամյանի անվան Փոնդին առաջին ժամակցությունը բերեց Պ. Ռոման Խասելիր 250.000 բիարտվ. Նրան սիրով հետևեց Թեհրանի Ազգային Եկեղեցին 100.000 ըհալով:

«Թեհրանի համայնքի քաղցր ու սրտաբուփ վերաբերմունքի հետևանքով հանգանակության գումարը միայն թեհրանում մասենում է 2.000.000 ըիալի:

«Հանգանակությունը արձագանքեց ոչ միայն հայ, այլև օտար մամուլը, որնք այդ գործին ցույց տվին լոյն աշխացություն։ Ոգևորությունը հանգանքեց ողջ իրանի հայությանը։

«Եկեղեցոնական Հանձնաժողովը օգտադրելով այս ոգևորությունը, պաշտոնական գրությամբ կոչ արամի Խրանի բորբոքաններին Եկեղեցական ու ազգային մարմիններին — ոկոած Առորդանութեանի Առաջնորդարանից Գերազնորւ Տեր Ներան Արքականականության Նոր Ձուղարի կրոնականությունը Եկեղեցանությունը կամ Վարչություններին։ Ամեն տեղ սիրով արձագանքեցին կոչին և բարոր վայրերում կազմակերպվեց Զոր. Բաղրամյանի անվան տաճկային սրբության ֆոնդի ենթահանձնաժողովներ, որոնք կողմանը կամ Հայությունը կողմանը հաստատելուց հետո, անցան Հանգանակության։ Թեև շրջանի Հանգանակության գումարը հայունի չէ, առկաբ Հայության ավյաներից երեսում է, որ անցնում է մի միջին 1.000.000 ըիալից։ Այս աշխատանքների մասին Թեհրանի ուղիու կարսնից տեղեկություն տրվեց ի բուր աշխարհի և կոչ արվեց Սփրութի հայության, որպեսզի յուրաքանչյուր Հայրենասեր շտապի իր մասնակցությունը բերելու։ Ամենք բարորս պարծենում ենք Առօհքը գործադիրին Կարմակով, որը նախաւարձուկ թշնամու ողնաշարը վշտերով դեպի

արևմուտք, դեպի Բերլին է քայլում մի լուսավոր մամեդ նահատակների արյան վրեժը լուծելու արյունաբրու հիտերականներից։

«Եկեղեցոնական Հանձնաժողովը հետազրներ ուղարկեց Նյու-Յորքի, Լոնդոնի, Գանձերեի, Բեյրութի, Անթիլիասի, Երևանողեմի, Բաղրամյանի, Հնդկաստանի Ազգային Եկեղեցու բոլոր առաջնորդներին, Ազգային Մարմիններին և մկեղեցական վարչություններին, ինպես ուղեց ամեն տեղ ստեղծելու ու ընտրել Զորավ. Բաղրամյանի ավելանականին այսուհի Փոնդի Ենթահանձնողությունը հանգանակությունները ղեկավարելու նարատամրով։ Ահա պաված այս համեստ գործը շնորհիվ Հայ ժողովրդի ու իր ող գայլին Եկեղեցու միանականության, զաւուով մեծացավ ու դարձավ Համազգային Մրագան գործ։

«Այսօր Մփրութի Հայությունը Հպարտ է գործած իրեն Մայր Երկրի քաջարի եղբայրների պարագործություններով։ Մայր Երկրի մեր Եւրոս եղբայրները քույց ամին, որ Հայ ժողովուրդը եղել է և այժմ էլ Հանդիսանում է Եւրօս ժողովուրդ իր Երրուսակատառ անցյալով ու Ներկայութ։

«Զորավար Բաղրամյանի Փոնդի Կնքնորնական Հանձնաժողովի միջամտերն են՝

Շուման Խասելի (Խայրան նախագահ)

Հովհան Ավագ Հանդիսական (առաջին օդի և գործերի վարիչ)

Սեղմակ Ավագ յան

Մուրեն Արքային

Հովհաննես Բարսեղյան (գանձատպահ)

Խաչիկ Արքաւամ յան

«Վեհաժառանչու թերթի խթագիր ներկայացուցիչ Հայի Գարագուլ

Ալիքը Թերթի ներկայացուցիչ Հովհաննեսի կամ

Հովհաննեսի Ալիքանյան (գարսուալար)

Մկրտչու Մկրտչույան :

## ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՒԾ

Հնագույն ժամանակաշրջանում հայրը էին և պաշտում էին շատ առավածների: Ինչպես ուրիշ ժողովուրդներ, այսիր էլ իրենց առավածներին մերագրում էին մարդկային հասկությունները: Այսպես նրանք Արամազդուն համարում էին աշխարհի առեղծող և պահապահ, նաև մարդկության և բնության ինստավալ հայր: Նրանից փոքր և նրան ննթակա էին Անահիտը՝ ծննդաբերության և երկրի պաշտամբության հավանագործ առավածներին, Վահագն անպարտելի քաջությամբ օժաված առավածորդին, Աստղիկը՝ գեղեցկություն դիցուհին, Տիր Արամազդի դուռը քարտուղարը կամ գիտությունների, իմաստության առավածը և այլն:

Այդ ժամանակաշրջանում, ուրեմն հայ ժողովուրդը պաշտամունքի առարկա է դարձրել աիեղերատեղծ ույթը, քաջությունը, երկրի և մարդկանց պաշտամբությունը, գեղեցկությունը, գիտությունը և այլն:

Բնության երևույթները պատկերելով որպես գերբնական հակների կամքի և ուժի արտահայտություն՝ ժողովուրդը պատշտել, երկրապատել է նրանց, զգալով երկյուղ կամ սեր գեղափառություններական էակները, որոնց առեղծել է իր երևակայության ուժով: Ահավոր առավածների սրտերը սիրաշահել են ծնրադրությամբ, զուեռով, նույնիսկ մարդկազությամբ, իսկ մարդու համար օգտակար, մառցող, գուրդող առավածներին մատուցվել են հարցանք սիրախառն պաշտամունքով և հանեսներով:

Ոյսպես կրակը և ջուրը, նրանց կենաց ազակարությունը սիրո և պաշտա-

մունքի առարկա են դառնել հնադարյան հայի համար և ճանաչվել առավածային, նրանց մասին հորինվել են առասպելներ, զրույցներ, պատմվածքներ, որոնց զուգակցել են ծեսեր, արարողություններ: Նույնպիսի առասպելներ հորինվել ու պատմվել են հայկական հեկա լիոների՝ Մասիսի, Արագածի մասին, Գեղամա լճի, Բղնուանեաց ծովի մասին և այլն:

Դարերի ընթացքում պաշտամունքի առարկա ճամաչվեցին իրենց օգտակարությամբ կրակը, որի կապակցությամբ կը բախապաշտությունը առաջ եկավ և ծավալում կը ըն մեաց հայրի, պարսիկների, քանանացիների և ուրիշների մեջ:

Կրակապաշտության հին հետքերը Հայոց մեջ մեացին ընդմիւտ և քրիստոնեական ծեսերի մեջը մտնելով քրիստոնեացան ու պահապանեցին իրենց զոյությունը և պաշտամունքը ցայսօր, (տրնդեզը Տյանմընդուռուցի տոնին, էմինիանի զանգակատան առաջ, Հայոց գյուղերի բոլոր տների կը առուների վրա վառվող խարույկները, գոմերի երդիքներից չամփող կրակի կայծերը, եկեղեցիներում առատորնեն մումեր վառելու սովորությունը և այլն և այլն):

Մեր խոսքը Շիոյր կրակից պաշտամունքի մասին չէ այսեղ, այլ նրա գիուր եղուրը մասին է, զուր առածու մասին, որ գրիստոնեական եկեղեցին մտել ու դարերով առնվում է վկարզավառի տոն անունով:

Կրակի շափ էլ ավելի անհրաժեշտ էր հնագույն մարդկության (ինչպես և բոլոր ժամանակների մարդկության) համար ջուրը: Զիր կարեռությունն է առտուածացրել և պաշտամբ գարձրել ջուրը: Մովերը,

գետերը, աղբյուրները բոլոր ազգերի մեջ պաշտվել են ոբակա առառածներ և առնվել մեծ հանդիսավորությամբ:

Մեր արդի քրիստոնեական Վարդավառի առնը Քրիստոսի պայծառակերպության տոնն է, որի մեջ պահպանվել են Սրբ պատաժների տարրերը: Բայց այդ տօնը քրիստոնեության ծագման հետ կապված չէ, այլ հայոց Եթանոսական համանակի պղպացին տոնն է, որ հետազայում, քրիստոնեական գարում Քրիստոսի պայծառակերպության հետ է կապվել և դարձել քրիստոնեական տօն:

Վարդավառը հին հեթանոս հայոց մեծ տօներից մեկն է և կապված է Ջրհեղեղի, Նոյ Նահապետի տապանի առասպելների, հետ, Ջրհեղեղից ազատիստ նախահայրերի և Խորոված կյանքի հետ: Քրիստոնեական Վարդավառի տօնը հնադարյան Հայության նավասարդի տոնն է:

Ինչպես պատում է ասասպելաբանությունը՝ Նոյ Նահապետը Ջրհեղեղից ազատվելու համար և իր հետ իր որդոցն ու բուրուր կինդանիներից մեկ մեկ զույդ ազատվութամար, նավ նատեց ու Ջրհեղեղից ազատեց թե Տարդիանց և թե Կենդանիներին և նոր մարդկության ու կինդանական կրծնքի մկնացը դրեց այդ օրը և առաջին ամիսը նա անվանեց «Նավասարդ»: Երբ Ջրերը ցածաքցին և Նոյը նամիւն իրավ բնակություն հաստատեց Նախիջեվանում, այսինքն իրման առաջին անդր, նա կենդանիները գունեց և այդ օրվանից հարց տարփա առաջին ամիսը կոչվեց Նավասարդ նորոգման աշխարհի առաջին առի:

Ջրհեղեղի և նրանից առանձինու հիշատակը համբաւենափես մեմոռաց պահետ համար Նոյը պատուիրում է իր որդիներին այս առաստության մեջ օրը իրար վրա ջուր ցանել:

Երբ քրիստոնեությունը տարածվեց հայերի մեջ հեթանոսական տօները տեղի ուժվին քրիստոնեականին: Հեթանոսական տօներից շատերը իրենց ձևերով ու արարություններով անխախտորնն մտան քրիստոնեական տօների մեջ, միայն կապվերով:

Քրիստոսի և քրիստոնեության անվան հետ Հեթանոսական Վարդավառի տօնը կապվեց Քրիստոսի պայծառակերպության տօնի հետ ու մեաց ժողովրդի մեջ հին անտառվ Վարդավառը ու տոնվեց եկեղեցուց դուրս անխախտ պահպեցին ու տոնվեցին ցայսօր հին Վարդավառի բուժ ժողովրդական ծեսերն ու խաղերը տներում, փողոցներում, գիտակների ափերին, աղբյուրների մոտ ուրախ խաղերով, իրար վրա ջուր ցանելով և այլն:

Քրիստոնեության տարածիչները Հայատանում արժառախիլ շարին հայ ժողովրդի մեջ դարձերով սրբագործված Հեթանոսական սովորությունները: Քրիստոնեության քարոզիչները Հայատանում քրիստոնեության վեճեմադույն գաղափարները Հաջողությամբ տարածելու համար ժողովրդի հին կրոնական-աղյույն ավանդություններին չդիսան, այլ պահպանեցին և նրանց որոշ շափակ քրիստոնեական բնույթ ավին:

Այդ ավանդական հին տվյալությամբ Վարդավառի տօնին աղավնի թոցնելոյ մուցեց, ի ու պահպանվել ժողովրդի մեջ:

Այդ ավանդական տվյալությունները հիշեցնում է Նորան արագինին, որ արձակվեց տառպանից:

Այսից ազգերի մեջ Վարդավառի տօնը կոչվում է նաև Անդամիների տօն: Այդ որերը աղավնիներ են թոցնում նաև Հայերը, օրինակ Կ: Պողոսը և այլ գալատոններում, որ հիշեցնում է Նոյի թոցրած աղավնում:

Ինչպես բոլոր ազգերի, նույնպես և հայ ժողովրդի մեջ ջուրը համարվել է սրբիչ, ծաքրիչ, առողջացուցիչ և դրացուցիչ պալտամբունքի առարգա: Ջուրը ցանում էր առավածներին մատուցման նվերների, ինչպես և մարդկանց վրա: Զրի հետ կապված այդ հեթանոսական տվյալությունների մեջ ժողովրդի մեջ և կապվել է մեր ժողովրդի մեջ և կապվել քրիստոնեական Վարդավառի տօնի հետ: Վարդավառի օրը մինչև այսօր ջուր է ցողվում: Իսկ դուրսը իրար վրա ջուր են ցանում մեծ թե ժողով, առա ու աղջիկ: Ժուր ցողելիս և դուրսը իրար վրա ջուր

ցանելիս գործադրվել է մի հասուկ անոթ, որ կոչվում է «մշտուկ», դա նշանակում է ջուր ցանող գործիք, ցանիչ:

Վարդավառին և Ամմիանի պատարագի մեղանը, աշտանակները զարդարվում էին ծաղիկներով, կանաչներով, բույսերով, որոնք աճել են հնում պաշտելի սուրբ Զբութ:

Վարդավառի տոնը Հիլեցնում է այսօր, երբ Հայոց Տրդատ թագավորը հրամայում է սուրբ Գրիգոր Լուսավորչին պատակ և թաւ ոստու ծառոց նուէրս տարցէ Բատղին անհատական պատկերին:

Թրիստոնեական մկրտությունը սրբացրել է Հին Յրապաշտության ովկորությունը, Զրի պաշտամունքը: Թրիստոնի ծննդյան և մկրտության տոնին, որ կոչվում է նաև Ջօրէնյաց տոն, քրիստոնեական եկեղեցու Հոգևորականությունը թափորով դեմուգին է զնում ժողովրդի Հոծ բազմության հետ միասին «խաչը ջուրը զցնելու», երբ հանդեսի ժամանակ կրոնապետը ոսկեզն աղասիու կտուցից սուրբ Ժյուլոնն է լցնում գետի մեջ, այդ վայրկյանին երիտասարդները մերկանալով նետումում են ժյուլոնված ջրի մեջ լողանալու: Զրի և աղասինիների հետ կապված այդ բոլոր ձևերը Հեթանոսական յրապաշտությունից են ստացել իրենց ծագումը. քրիստոնեական պաղամբների արտահայտություն, քրիստոնեական իմաստ են ստացել ու պաշտամունք դարձել:

Հնադարյան ջուր աստծու ազրյուրներն էլ տեղ տեղ սրբավայր են մեացել մինչև այսօր, ուխտատեղ դարձել ժողովրդի համար: Հայաստանում դրեթե դատար չըկա, որ չունենա իր պատր ազրյուրը, իր «Լուսավորչը», ինչպես կոչվում են նըւրանց, ուր հավատացյալները աղոթերու, մոմ վատելու են զնում, նրա ջրով իրենց ցավազար աչքերը լվանում, իրենց փարչերը «Լուսավորից» ջրով լցնելով տուն վերադառնում:

Հայոց եկեղեցու ավանդության ուսուր Հորիսիմյան կույսերը իրենց փախայան նանապարհին մի ժամանակ զաղար են առել Սողոմի սարի ստարուստամ (Բերկի զաղամար): Այդ դավանի ժողովությը համարած աշխացավով էր սառուապամ: Աշխացավով ըննվում են նաև կույսերը, ունց աղբթեռվ երկու աղբյուր է բղիում այդ տեղից, այդ վկուաղբյուրներից հրաշագործ ջրով բժշկվում են բոլոր ուխտագորների ցավազար աչքերը:

Անհետագրքիր չէ իմանալ, թե ինչու սուսպերական նոյնի սահմանած հեթանոսական տօնը ցրիստոնեական եկեղեցին առնում է Թրիստոնի պայծառակերպությունն էլ տեղի է ունենում նույնպես մի բարձր աշի գլուխ:

Նոյնի Ջհւեղեղից ազատվելը անզի է ունենում Մասփուի բարձրունքում, Թրիստոնի պայծառակերպությունն էլ տեղի է ունենում նույնպես մի բարձր աշի գլուխ:

Ջրհեղեղի առանգելիք մեջ նոյն ժանկամիտ ժարդկությանը, կենդանական աշխարհի ներկայացուցիչ զույգերին Մասփուարի գլուխությունը հանելով փրկում է, ապա ջրհեղեղից հետո ինեցնում երկիր, որ առրնեն, անեն, բարձանան, պաշտեն թեության բարի տարերքը, չար տարերքին զուշաբրություններով սիրաշահելով, բարիներին պաշտերով, սիրով ծառայերով:

Թրիստոն բնապաշտության մալորությունը վերացրեց իր ուսմունքը քարտելով: Աս աստծուն տեսավ ոչ Զրի, ոչ կրակի ոչ էլ մի այլ տարերքի մեջը, այլ մարդու սրտի մեջ: «Աստուած ի ներքս ի մեջ է», ասում է նա, կարող եք Աստծուն նմանել, երջանիկ մինել այս երկնավոր, հրաշալի աստվածային ուսմամբ: Վարդապետությանը, որ կոչվում է սուրբ ավետարան:

Անւրախ չեր, հոգի քրիստոնէութեան, զի խաւարն մերժեցաւ: Եւ ախն ծագեցաւ: Միշտ, հանապազ լուսատու իլցի չեղ Թրիստոն:

## ՀԱՅՈՂԻԹՅՈՒՆՆԵՐ ԿԵՍԻՏԸ ՎՐԴՈՎԵԼԻ ՄՍԻՆ

Հայր Կոմիտասի անունն ամբան մոտ է մեր բոլորին որտին, որ ամեն մի մանրամասնություն, ամեն մի նոր լուսաբանություն մեծ երաժշտագետի կյանքի մասին, սիրով և հետաքրքրությամբ կընդունվի մեր ընթերցողների կողմից:

Հ. Կոմիտասի կենապրությամբ պետք է մասկառար եավալով մասուցվի մեր ընթերցող հասարակությանը ճանաչելու որ սքանչելի մարդուած իր բոլոր կողմերով, եթե նրա մասին մեր ունեցած այս կիրազությունները որոշ նորություն և լուսաբանություն կմտցնեն նրա կենապրության մեջ, ապա դրանով մեծապես վարձառըլված կլինենք՝ մի կողմից նպաստած լինելով ավելի բարձրակողմանիորն ճանաչելու նրան, մրու կողմից հրապարակով արեանի հարգանք մասուցանելու նրա անքին հիշատակին:

Մենք բախտ ենք ունեցել հայր Կոմիտասի հետ միասին պաշտոնավարելու Գեղորդյան Հոգմետր նեմարանում 1901—1907 թ. թ. 1.

Հ. Կոմիտասն արտասահմանից վերադառնարով, շատ կարճ ժամանակում մեծ անուն հանեց թե իր կարմած քառամամի խմբի ներդաշնակ երդեցողությամբ և թե իր հմայիչ մշակված մայստի. Մեր ակնարկած եամ անակաշը շամում նրա քառամայի խութը կարմած էր բացառապես ճեմարական մեջ:

Այս հանդամանքը մեծապես կաշկանդուած էր նրան, Հնարավորություն չունենալով դրամից օժանդակ ուժեր՝ մանավանդ կանոցի ձայներ բերելու: Զնարան դրան, այնուամենայնիվ իր ձեռքի տակ եղած ուժերով էլ նա կարողանուած էր իր խութը արժանի բարձրության վրա պահել: Հ. Կոմիտասի

խումբը նրանք էր Մայր Տաճարում և ճեմարանում թե Հանդեսների ժամանակ, թե մեծ առներին բացօթյա, ևնց ժողովրդի մեջ:

Հայր Կոմիտասի գործունեությունը մեր նշան ժամանակաշրջանում արտահայտվել է քառամային խմբի ղեկավարության և եկեղեցական ու առավելապես ժողովրդական երգերի մշակման մեջ:

Հայունի է, որ եկեղեցական արարողության ամենաէական ժամը և պատարաղն է: Հ. Կոմիտասից առաջ պատկանագի երգեցողության մշակման վրա ամենից շտացիչնախանել է Հանգ. երաժշտողեատ Մ. Եկեղեցանը, որի մշակման ու ելքուական նոտաներով Հրապարակված պատարագի քառամային երգեցողությունը մի պատկանելի աշխատանք պետք է համարել երաժշտական արվեստի ասպարենուա:

Հ. Կոմիտասը մշակեց պատարագի իր ըստամային երգեցողությունը, որը բառ կորմերով ասարքեր էր Սկմալյանի կազմածից: Մենք կոմպուտենու չենք երաժշտական տեսակետից մուտքարու արդ երկուափ գործերին և համեմատելու միշյանց հետ, բայց միայն կասենք ոռակ իրքեւ ունենալիք մեր և բարձրաթիվ անձանց սուսցած տպագործությունը Հ. Կոմիտասի պատարագի երգեցողությունից:

Պատարագի արարողությունը բավական երկար է առևում, երբ առյանում քառամային խութը է երգուած: Մեր եկեղեցիներում միշյափ առի վրա կանչնած են լուսուածերդությունը, Զնայելով այդ հանդամենքներին, Հ. Կոմիտասի պատարագի երգեցողությունը շատ սիրավ և անձան-

րութիւն էր լովում և Հոգեկան մեծ բազար կանություն պատճառում ունեկաղբիններին:

Աեր ակնարկած ժամանակաշրջանի ոկրութիւն երիմյան Հայրիկն արգեն բոլորն էր իր կյանքի 80-ամյակը և մոտել 81-ի մեջ, և չայած այդ պատկառելի տարիքին, նա մինչև պատարագի վերջը մոռաւ էր Մայր Տաճարում և բուռ 2. Կոմիտասի երգեցողությունը: Մայր-Տաճարը միշտ լինում աղօթող երկանու խուռն բազմությունը: Շատ ժարգիկ կիրակի և առն օրերին գայիս էին Երևանից և հջմածին Հատկապես և Կոմիտասի քառամայն խրութիւն երգեցողությունը և առաջ բարձր կամաց կազմակերպին էր առաջանաւ և մշակված քաղցրիկ մայնով երգում էր զգանձրանորից բեկը, որինակ՝ Գրիգոր Նարեկացու Համբիկը: Պետք էր տեսնել Հավաքված ժողովորդի բուռն Հափշտակությունը նրա երդի տպավորության տակ, երբ էր երգում էր իր սիրեց ու մշակված քաղցրիկ մայնով երգում էր զգանձրանորից բեկը, որի ելեկի ները ասրածվում, մարմում են հակա տառ նարի բուռ մնակյուններում, իսկ աղոթողների տովար բազմությունը գամկած իր աեղում և Հափշտակությունը լուսւ էր նրան: Պատրագից Հետո, երբ բազմությունը գուրս էր զայիս տաճարից, շատերը մտանում էին և Կոմիտասին և իրենց Հիացմունքը Հայունում թե խորի երգեցողության և թե Հենց իրեն, և Կոմիտասի երգեցողության առթիվ: և Կոմիտասը արքանք, մեր էր վայելում բոլորի կողմէց:

Երիմյան Հայրիկը շատ էր սիրում Հանդիսավորություն առ և եկեղեցական մեծ տուներին, և մասամբ ավագ շարտթի տուներին, Զատկին, Ս. հջմածնի և Միջակա կուրսերի վկայարանների առներին: Նախանձանդիրի լինելով գեղեցիկ երգեցողությունը, Հայրիկը նախօրոք Տաճարի լուսարարագետն է և և Կոմիտասի Հետ խորհրդականութիւն էր նմիւնական այդ առներին:

Վոր վայելությամբ կատարելու համար: Բոլոր տոներին է Կոմիտասն իր քառամայն խմբով և իր երգեցողությամբ ամենահետաքանակ տեղն էր զրավում:

Գնուրդյան Ծեմարնում, նրա ընդարձակ դաշինում, եկեղեցական ու ազգային բոլոր տոներին միշտ զրական-երաժշտական Հանդեւուներ էին կարմակներում վեհափառ Հայրապետի, վասնչի ամբողջ միարանության, աւուցիչների ու նրանց ընտանիքների և գրուի սպամաթիվ անձանց ներկայությամբ: Եթե Մայր-Տաճարում և Կոմիտասը փայլում էր եկեղեցական երգեցողությամբ, ապա այս հանդեւուներին նա իր բնատոր ընորհը ցուցադրում էր առջային ու ժողովրդական երգերով, որոնց մշակման վրա նա օրինրեն աշխատում էր: Պետք է նկատի ունենալ, որ դպրոցական աշակերտական քառամայն խմբերն իրենց կազմով ամեն տարի վրա փոխվում էին: տարեկերջին ավարտողներն ընդմիջությունում էին, նրանց վորսարինում էին նոր ուսումնական ակդրբին ընդունել վաճակները, այնպէս որ և Կոմիտասն ամեն տարի նոր քառամայն խումբ էր կազմում:

Նա իր պարագանեւններն սկսում էր Հենց ուսումնական ակդրբին ամենայն ժամանակությամբ, որպեսզի առաջին մեծ տոներին Ծեմարնի առթագործներին, մելանտերների վերջին իր խմբով Հանդեւուն գա Հափշտակության առաջ: Նրան Հանդեւունը էր զարմանակ արագությամբ աշակերտներին սովորեցնել ներդաշնակ երգել: Պարագանեւնների ժամանակ նա շատ խուռապահանջ էր: որբան նա բարի էր, կառակասեր ազատ եամեներին, այնքան ամենի խիստ էր պործի ժամանակ: պահանջներ ու անտղոք: Նա սիրում էր իր գործը Հոգու ամբողջ զրավությամբ և զործի մեջ ոգեսրբության ժամանակին նրան տեսնելով էլ էր Հանդեւունը նույն զգացմունքով, նրա ապրումներով: և Կոմիտասը, Ջերմարն սիրելով իր գործը անկեղծութեան սիրում էր նույն իր խմբով աշակերտներին, որոնք զործներանապես տեսնում էին իրենց սիրելի ուսուցչի գրանալին աշխատանքի արդյունքը:

Խմբական երգեցողության ժամին կռամ ինչ-  
պես Հ. Կոմիտասն էր սառու, լուրջին,  
խմբի բոլոր անդամներն անհապաղ զանդը  
տալուն պես Հավաքուս էին դահլիճնեմ:  
Վայն եկել տարել էր պատահամբ ուշա-  
ցողին, որովհետև Հ. Կոմիտասը լոկուսի  
այսպիսի զայրացիոս հարցը էր դառն  
ուշացողի վրա, որ վերջին ամսթից ուղի-  
ու աեղք հարցում էր: Աշակերտները դիմեին  
նրա բնավորության այս կործը և երբեք  
թույլ չեին տալիս իրենց նեղացնել սիրելի  
ուսուցչին:

Հ. Կոմիտասը քառամայն խմբի հետ պա-  
րապելուց բացի, առանձին պրապառն էր  
նույն խմբի երաժշտական ընդունակու-  
թյամբ օժոված և լավ ձայն ունեցող ու  
ապագա խոստացող աշակերտների հետ:  
Նրանցից ոմանք հետապարում երաժշտու-  
թյան դաստաններ զարգան մեր զպրացն-  
ուում, իսկ ոմանք էլ բարձրապույժ երա-  
ժշտական կրթություն ստացնու: Վերջին-  
ներից էր առաջնազարդոր երաժշտապետ  
հանգ: Սպ. Մելիքյանը, որն ամստանակ  
գերեզման իշնելով հարավորության շու-  
նչեավ իր ամբարտ մեծ պաշտը լիսկա-  
տար ծավալով հանդես բերել:

Ամբողջ սեպտեմբերի միթացքում պարա-  
պերով իր նորանկազմ քառամայն խմբի  
հետ, Հ. Կոմիտասը կազմ ու պատրաստ  
էր իր խմբով ներեվարու հասարակության  
առաջ և, ինչպես ասացինք, սուսցին մեծ  
տոնը Գեվորգյան Ծեմարանի առքեդարձն  
էր, որ տոնվում էր սեպտեմբերի վերջին՝  
ու Գեվորգի տոնին, Մողնու ու փոքին:

Այդ օրերին մեծ քառակությամբ հրուեր  
էին լինում նաև հետավոր քաղաքներից՝  
Լենինականից, Կարսից, Ափալքարակից,  
Թիֆլիսից և այլն: Ծեմարանի տոնը կա-  
տարվում էր բացօթյա, ծեմարանի հրու-  
սակում: Գույնզգույն լսավորինե-  
րով, վառ ծաղիկներով և բնկուզնուու զա-  
լար տերեններով զեղեցիկ զարդարված ծե-  
մարանի շենքի հյուսիսային դռան առաջ  
շարվում էին բազկաթուներ, աթոռներ,  
բազմաթիվ նասարաններ Վեհափառի, միա-  
բանութեան, ուսուցիչների և հեռավոր

տեղերից եկած հյուրերի համար, իսկ հա-  
զարամյոր ծովագորոշը խոնզվամ էր շուրջը  
և սպասաւ հանդիսի բացմանը: Ահա ե-  
րեսում է Արմեյան Հայրենիքը, ըրջապատված  
միաբանության անդամներով և Հյուրերով:  
Բազմելով իր համար պատրաստված զար-  
դարուն զամփ վրա, մասցածներն էլ աղա-  
